



Sibil

Երգեցիկ և նուրբ անունով այս եթերային երգչուհին միայն առաջին հայացքից է փիրուն և անպաշտպան երևում: Իրականում նա խիզախ և անկորրուստ անձնավորություն է, ով իր երազանքին հասնելու համար սրիսկված է եղել հաղթահարել բազմաթիվ փորձություններ: Այդ խորթին ուղին անցնելուց հավասար երբեք չի լքել նրան, և այսօր նա վարահորեն ասում է. «Երբեք մի՛ դադարեք հավատալ, քանի որ հավատն է այն շարժիչ ուժը, որը սրիսկում է մեզ առաջ գնալ»:



Ստամբուլում պոլսահայ ընտանիքում ծնված աղջնակն իր կյանքի առաջին իսկ պահերից ապրել է երաժշտության կախարդական աշխարհում. «Փոքրուց սիրել եմ երաժշտությունը: Հայրիկս երգչախմբի անդամ էր: Ամեն կիրակի միասին եկելեցի էինք գնում: Մանկությանս ամենավաղ հիշողությունները կապված են խոնկի բույրի և եկելեցական մեղեդիների հետ: Հենց մանուկ տարիքում էլ բացահայտեցի, որ կարող եմ երգել և ցանկանում եմ ապագա կապել երգի հետ: Սակայն ժամանակի ընթացքում հասկացա, որ զուցե երգչուհի դառնալու իմ երազանքն այդպես էլ երազանք մնա: Հայրս բավական պահպանողական մարդ է և չէր ցանկանում, որ ես կապեի իմ կյանքը բեմի հետ: Բացի այդ, ապրելով Թուրքիայում, ես չէի կարող թեմից հայկական երգեր հնչեցնել: Իսկ ես հենց դրա մասին էի երազում: Երաժշտության հանդեպ ծարավս հագեցնելու համար դարձա երգչախմբի անդամ և հնարավորություն ստացա մասնակցելու բազմաթիվ համերգների: Սակայն սիրտս ձրգտում էր դեպի մեծ բեմ: Իսկ ես նույնիսկ գաղափար չունեի, թե ինչպես կարող եմ իրականացնել իմ երազանքը, սակայն հույսը այդպես էլ չկորցրի: Եվ Աստված լսեց իմ ձայնը՝ իրականություն դարձնելով կյանքիս ամենամեծ երազանքը»: Միբիլի կյանքում և մասնագիտական կայացման մեջ ճակատագրի գործոնը շատ մեծ է եղել:

Նրա ճանապարհին ճիշտ պահին հայտնվել են մարդիկ, ովքեր, հավատարմով Սիբիլի ուժերին, առաջ են մղել նրան: Նույնիսկ ազգությամբ թուրք երաժիշտները, գնահատելով նրա տաղանդը, Սիբիլին հրավիրում էին իրենց համերգներին: Հենց նման մարդկանցից մեկի շնորհիվ էլ Սիբիլը բարձրացավ պրոֆեսիոնալ բեմ: Նա այսպես է հիշում իր առաջին մենակատարումը. «Իմ առաջին մենակատարումը եղավ մի համերգի ժամանակ, որին ներկա էր Գարեգին Ա կաթողիկոսը, ով այդ տարի այցելել էր Թուրքիա: Ես երգեցի «Եվ կյանք» երգը: Դա կյանքիս առաջին տղո կատարումն էր: Մինչ այդ ես հանդես էի գալիս Պոսի երգչախմբի կազմում: Չափազանց մեծ պատասխանատվություն էր, քանի որ ինձ ընտրել էին շատ այլ փորձառու երգիչների թվից: Ինձ առաջ էր տանում և օգնում իմ երգչախմբի ղեկավարի վստահությունը: Ես արդարացրի նրա և բոլորի սպասելիքները»:

COSMO Գիտե՞մ, որ 2001 թ. առաջին անգամ եք այցելել Հայաստան: Ինչպիսիք էր Ձեր տպավորությունը:

SIBIL Կյանքիս ամենայուրահաստուն և ամենաանմոռանալի տասը օրն ապրեցի Հայաստանում: Իմ այցելությունը համընկավ Հայաստանի անկախության տասնամյակի տոնակատարություններին: Շատ մեծ հուզմունք ապրեցի: Դա իմ առաջին այցելությունն էր մի երկիր, որի գեղեցկության և կախարդանքի մասին միշտ լսել էի: Կարծում եմ Թուրքիայում ծնված և մեծացած մարդկանց համար Հայաստան այցելությունն այլ խորհուրդ ունի: Եվ իհարկե՛ լեզուն. ուր գնում էի, միայն հայերեն խոսք էի լսում: Մանուկ տարիքում հայերեն ազատ խոսել կարող էիս միայն տանը, իսկ փորոցում՝ միայն թուրքերեն: Մեր դրոշը տեսնելը, հայերենով երգեր լսելը, այդ ամենը երջանակացնում էր ինձ և ստիպում ճախրել:

COSMO Եթե չգրադվելիք երաժշտությամբ, ապա ինչ քնագավառում կփորձեիք Ձեր ուժերը:

SIBIL Ես միշտ փափագել եմ բեմի վրա հայերենով երգել: Սակայն Թուրքիայում դա, քնականաբար, անհնար է: Այդ պատճառով որոշեցի ռաջիոնալ լինել և մեկ ուրիշ մասնագիտական կրթություն էլ ստացա: Այսօր ես աշխատում եմ նաև ֆինանսների ոլորտում: Իհարկե, հույս ունեմ, որ մի օր լիովին կկարողանամ տրվել երաժշտությանը: Ի դեպ, որքան որ սիրում եմ երաժշտությունը, նույնքան էլ սիրում եմ երե-

խաներին: Եթե չընտրեի երաժշտությունը, ապա անկասկած կցանկանայի ուսուցչուհի լինել: Աշակերտի կյանքում ուսուցչը շատ մեծ դեր է խաղում:

COSMO Ո՞ւմ հետ կցանկանայիք գուցե երգ կատարել և ինչն:

SIBIL Իմ ամենամեծ երազանքներից մեկը Շառլ Ազնավուրի հետ ծանոթանալն ու նրա հետ համատեղ երգ ձայնագրելն է: Նա մի անձնավորություն է, ում ես անչափ սիրում եմ և հարգում: Շատ կցանկանայի երգել նաև Անդրեա Բոչելլիի հետ: Երջանիկ կլինեի, եթե նրա հետ կատարեի հանրահայտ **Time To Say Goodbye**-ը: Իհարկե, հեռուում եմ հայաստանաբնակ երգիչներին և մեծ բեմերում նրանց ունեցած հաջողություններին: Այսօր Հայաստանում երգիչների նոր ու անչափ հզոր մի սերունդ է մեծանում:

➔ Ի դեպ, Սիբիլը պատմում է, որ իր համար մեծ անակնկալ էր և պատիվ երգիչ Անդրեի հետ «Մենք ու մենք» նախագծի շրջանակներում համատեղ կատարումներով հանդես գալու առաջարկություն ստանալը: Նա հույս ունի, որ այդքանով չի սահմանափակվի իր համագործակցությունը հայրենիքի մշակույթի ներկայացուցիչների հետ: Սիբիլն այսօր ունի բազմաթիվ երազանքներ ու նպատակներ: Նա երազում է երոյթ ունենալ աշխարհի տարբեր բեմերում՝ օտարազգիներին հայկական երգերն ու հայերենը լսելի դարձնելով: Եվ իհարկե, ինչպես ցանկացած կին, Սիբիլն ապագայում տեսնում է իրեն որպես գեղեցիկ և մեծ ընտանիքի մայր: «Հարյուրավոր երազանքներ ունեմ: Եթե դրանցից մեկն իրականանա, նորը կպահեմ: Եթե երազանքներս բոլորն իրականանան և սպառվեն, ապա դա կշնանակի, որ այս աշխարհի վրա ես այլևս գոյություն չունեմ: Քանի դեռ ես երազում եմ, ապրում եմ: Երազանքներս ինձ երջանկություն են պարգևում»:

COSMO Ինչ է Ձեզ համար նշանակում հայ լինել:

SIBIL Հայ լինելն ինձ համար մեծ պատիվ է և հպարտություն: Մայրը միշտ գիտի իր զավակի թերությունները և առավելությունները, սակայն չի հրաժարվում նրանից: Ազգության դեպքում էլ է նույնը:

COSMO Ինչն է Ձեզ օգնում և խանգարում աշխատանքում:

SIBIL Կյանքում և աշխատանքի մեջ շատ են օգնում բարեսիրտ մարդիկ, ովքեր քաջալերում են ինձ: Նրանց հետ ես ինձ զգում եմ ավելի երջանիկ և պաշտպանված: Իսկ

խանգարում է, անկասկած, նախանձը: Բայց ես թույլ չեմ տալիս, որ այդ տեսակի մարդիկ որևէ կերպ ազդեն իմ կյանքի վրա: **COSMO** Ինչ խորհուրդ կտաք մեր ընթերցողներին:

SIBIL Կյանքն իսկապես շատ կարճ է և ջրի նման հոսում է մատների արանքով: Մի մոռացեք դա և մի՛ լցրեք ձեր առօրյան բացասական երևույթներով: Երբեք մի՛ թողեք, որ նախանձը բույն դնի ձեր սրտում: Ես կցանկանայի, որ բոլորիս կյանքում սերն ավելի շատ տեղ ունենար: Եվ իհարկե հիշե՛ք՝ ուր էլ ձեզ տանի ճակատագիրը, աշխարհի որ անկյունում էլ հայտնվեք, երբեք մի՛ մոռացե՛ք՝ ով եք դուք, պահպանե՛ք ձեր լեզուն և արմատները: ★

